

Վարդան Յունանեանը, որ էր եպիսկոպոս Եպիֆանիոյ, ու յետոյ կը դառնայ Լէոպոլիս, ուր «առնէ բազում ուղղութիւնս, զայցարարութիւնս եկեղեցեաց, զեղբայրակցութիւն Ս. Գրիգորի Լուսաւորչին եւ զԱստուածածնին սահմանէ եւ հաստատէ»:

Նոյն Տարեգիրքը (Յաւելուած Ե., էջ 129) կ'ըսէ թէ Վարդան արքեպիսկոպոսը, 1690 Նոյեմբեր 10-ին, Ստանիսլաւովի մէջ «Կտրիճվորաց եղբայրութիւնն նոր յիմէն տված կոնդակովն երկուսումն (երկրորդ անգամ ըլլալով) կու հաստատէ, զորն որ վաղուց նիկոլ թորոսովիչն հիմնել էր»:

Կամենիցէն է դարձեալ որ 1728-ի ատենները Ստեփաննոս Ստեփանեան Ռոջքայ վարդապետը այցարարութեան կ'երթայ Թրանսիլվանիա, եղբայրութիւններ վերակազմելու համար՝ Լեհաստանի մէջ զոյութիւն ունեցող եղբայրութեանց տիպարին վրայ, ինչպէս ինքն իսկ կը վկայէ իր հիմնադրութեան կոնդակներուն մէջ (Գովրիկեան, Գրանսիլուանիոյ Հայոց Մետրոպոլիսը, էջ 76):

«ԿՏՐԻՃ»ՆԵՐԸ ՍՈՒՉՈՎԱՅԻ ՄԷՁ

Սուչովան ալ ունեցած է իր «Կտրիճվորաց եղբայրութիւնը» կամ ուրիշ բառով իր «Պրաստովա»ն:

Հոն, ինչպէս Մոլտավիոյ հայաչատ քաղաքներուն մէջ, կիրարկուած է կանոնադրութիւնը այն պատանեկան եղբայրակցութիւններուն, որոնք կը վաւերացուէին Ամենայն Հայոց Կաթողիկոսներուն կողմէ, իրրեւ տեսակ մը ազգային հիմնարկութիւններ:

Ռումէն Ակադեմիին մէջ կը գտնուի ձեռագիր մը (թիւ 673) որ Սուչովայի մէջ եղբայրութեան կանոնագիրն է, եւ որ 1673 Յունուար թուականը կը կրէ (N. Yorgia, Paralela Istorică, էջ 67):

Պոթոջան, 1790 Փետր. 20-ին դրուած կոնդակի մը մէջ Յովսէփ Արք. Արղութեանց կը վկայէ թէ Սիմէոն կաթողիկոս, Քափրիենց ազաչայ Գրիգորի խնդրանքով, 1780 Յունիս 14 կոնդակով մը, Սուչովայի մէջ կիրարկութիւնը

կ'արտօնէ վերակազմուած Կտրիճներու եղբայրութեան, որուն կանոնադրութիւնը անգամ մը վաւերացուած էր Աղեքսանդր Զուլայեցի կաթողիկոսին կողմէ ԺԸ. դարու սկիզբն իսկ:

«ԿՏՐԻՃ»ՆԵՐԸ ՄՈՒՏԱՎԻՈՅ ՄԷՁ

Մոլտավիոյ երեք գլխաւոր քաղաքներուն մէջ, Պոթոջան, Եաչ եւ Ռոման, «Կտրիճ»ներ կային ԺԷ. դարուն իսկ: Պոթոջանի եկեղեցւոյն մէջ կը գտնուի 1690-ին ձուրճով-Սան Միքլօշի մէջ գրուած կանոնադրութիւն մը, որով Սուչովայի օքսէնդի վանքին փոխ-առաջնորդ Օքսենտիոս վարդ. Վրդարէսքու կանոններ կը սահմանէ յիշեալ երեք քաղաքներու «Երիտասարդաց այսինքն Կտրիճվորաց» եղբայրակցութեան համար:

Տեղեկութիւններ չունինք Վրդարէսքու յօրինած կանոնադրութեանէն առաջ զոյութիւն ունեցող եղբայրակցութեանց մասին: Բայց իր իսկ կանոնադրութեանէն կ'երեւայ որ արդէն զոյութիւն ունէին կտրիճները իրմէ առաջ եւ ինք միայն վերակազմեց զանոնք:

Յիշենք որ այս այն Վրդարէսքուն է որ, Պոթոջան ծնած, յետոյ հիմնեց Կեռլա հայաքաղաքը, եւ կամաց կամաց կաթողիկոսեան յարեցաւ: Իր խմբադրած կանոնադրութեան մէջ արդէն կը յիշատակէ Պապին անունն ալ. «Ի Ժամանակս ընդհանրոյ հայրապետին եւ սրբազան փափին Տեառն Աղեքսանդրու եւ Հայոց կաթողիկոսին Տեառն Եղիազարու եւ փոխանորդութեան Առաջնորդին տեղւոյն Սէչովու վանիցն Տեառն Օքսէնդիոսի Վրժրէսքոյ վարդապետի, եւ յաւազերիցութեան Տեառն Եղիայի»: Ու պապին անունն սոյն յիշատակութիւնը կանոնադրութեան մը մէջ՝ որ պիտի կիրարկէր էջմիածնի կապուած շրջան մը, սրպիսին է Մոլտովան:

Ինչպէս այլուր յիշեցինք, Վրդարէսքու թէ եւ այս կանոնադրութեան մէջ Սուչովայի վանքին փոխ-առաջնորդ կ'անուանէ ինքզինք, բայց այդ թուականին (1690) ան արդէն յարած էր պապին: Արդարեւ 1684-ին ան իրր առաքելական պատուիրակ Թրանսիլվանիա կուղար Հոռոմէն, ուր մնացած էր 14 տարի եւ քահանայ ձեռնադրուած (Josepho Benko: Tran-